



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ՄՈՆԹԴԵԼԼՈՅԻ Ս. ԽԱԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ
 ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄԱՏԱՂՕՐՀՆԷՔ**

Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի անուանակոչութեան 85-րդ տարեդարձին առթիւ, անցեալ Կիրակի, 16 Սեպտեմբերին, տեղի ունեցաւ եպիսկոպոսական Ս. Պատարագ, որ մատուցեց եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը փոխանցեց թեմիս բարեջան Առաջնորդ Բարձ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Ս. Պատարագի ընթացքին կատարուեցաւ մատաղի եւ ռեհանի օրհնութիւն:



Ս. խորանին կը սպասարկէին եկեղեցւոյ զոյգ հոգեւոր հովիւները՝ Արժ. Տ. Նարեկ Քհնյ. Փեղիվանեան եւ Արժ. Տ. Աշոտ Քհնյ. Գամպուրեան:

Հաւատացեալներու կողքին ներկայ էին շրջանի երեսփոխաններ, Ազգ. Վարչութեան անդամներ, բարերարներ եւ գաղութիս մէջ գործող միութեանց ներկայացուցիչներ:

Պատարագիչ Առաջնորդ Սրբազան Հայրը, Ս. խաչի Վերացման Տօնին առիթով իր պատգամին մէջ փառք տուաւ Աստուծոյ եւ օրուան տօնին յատուկ իր պատգամը սկսաւ շարականագրին բառերով, ըսելով՝ «Քու ամենայադժ եւ պատուական խաչիդ առջեւ կը ծնրադրենք եւ երկրպագութեամբ մեր յանցանքներուն թողութիւն կը խնդրենք, որովհետեւ անով մարդկութեան դատապարտութիւնը վերցուցիր եւ այժմ, Աստուածային Սուրբ Նշանիդ միջոցով ամբողջ աշխարհին երկնային խաղաղութիւնդ շնորհէ»:

Ս. Պատարագի ակարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը կատարեց մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի փշէ պսակով սրբանկարին օծումը, որ նուիրուած էր գաղութիս Ազգ. Երեսփոխան եւ բարերար Տեր եւ Տիկին Ճօ եւ Նուր Սամուէլեանի կողմէ:

Ապա, Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ հոգեւոր հայրերուն եւ սարկաւազներուն, կատարեց Անդաստանի արարողութիւնը եւ օրհնեց եկեղեցւոյ չորս կողմերը, որմէ ետք կատարեց ռեհանի օրհնութիւնը:

Արարողութեան աւարտին, Սրբազան Յայրը, հոգեւոր հայրերը, սարկաւազները եւ երգչախումբը, թափօրով ուղղութեան «Բաղրամեան» սրահ, ուր հաւատացեալներու խումներամ ներկայութեամբ կատարուեցաւ մատաղի օրհնութիւնը, որուն աւարտին երգուեցաւ «Կիլիկիա» մաղթերգը:

Մատաղը բաշխուեցաւ ներկայ հաւատացեալներուն: Սիրոյ սեղանին շուրջ խօսք առին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Նարեկ Զինյ. Փեղիվանեան, հոգաբարձութեան ատենապետ Տորթ. Յակոբ Տիգրանեան եւ Ազգ. Վարչութեան ատենապետ Տորթ. Կարօ Յակոբեան, ապա Սրբազան Յայրը իր օրհնութեան, շնորհաւորական եւ քաջալերական գնահատանքի խօսքը ուղղեց Ս. Խաչ Մայր Տաճարի հովիւներուն, հոգաբարձութեան, Տիկնանց Միութեան եւ ներկայ հաւատացեալներուն, մաղթելով Սոնթեպելլոյի գաղութին բարգաւաճ եւ բեղուն կեանք:

CELEBRATION OF THE NAME DAY OF HOLY CROSS CATHEDRAL OF MONTEBELLO

Each year, Holy Cross Cathedral in Montebello celebrates its name-day on the Feast of the Exaltation of the Holy Cross with Episcopal Divine Liturgy as well as the blessing of *madagh* and basil. On Sunday, September 16, the Feast of the Exaltation of the Holy Cross and the 85th anniversary of the church was commemorated with Divine Liturgy celebrated by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. Assisting at the altar were parish pastors Rev. Nareg Pehlivanian and Rev. Ashod Kambourian.

In his sermon the Prelate spoke about the profound significance of the Holy Cross and of how our Lord saved mankind by means of the Cross, reminding the faithful that we can seek the remission of sins and find peace by humbling ourselves before the Cross. At the conclusion of Divine Liturgy the Prelate consecrated a painting of our Lord, Jesus Christ, wearing the crown of thorns, donated by sponsors Mr. and Mrs. Joe and Nver Samuelian, followed by the blessing of basil.



Following church services, the Prelate, pastors, deacons, and choir members headed to “Bagramian” Hall in a procession where the blessing of *madagh* took place. Remarks were made by Rev. Nareg Pehlivanian, Board of Trustees Chair Dr. Hagop Dikranian, and Executive Council Chair Dr. Garo Agopian. The reception concluded with the Prelate conveying his blessings and congratulatory remarks to the pastors, Board of Trustees, Ladies Auxiliary, and parishioners.

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՎԵՐԱՄՈՒՏԻ ԱՌԹԻ ՈՒՄՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄԵՐՈՒ ՄԻՕՐԵԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

2007-08 ուսումնական տարեշրջանի դպրոցական վերամուտի առթիւ, նախաձեռնութեամբ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին, Շաբաթ, 16 Սեպտեմբեր յետ միջօրեի ժամը 4:00-6:00, Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահէն ներս, տեղի ունեցաւ ուսուցչական կազմերու լսարան-հաւաք:



Լսարան-հաւաքին Առաջնորդ Սրբազան Հօր կողքին ներկայ էին Գերայ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան, Ս. Բառասնից Մանկանց Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Հրանդ Բիւյ. Երեցեան, Ս. Սարգիս Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժ. Տէր Խորէն Բիւյ. Պապօշեան, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւներէն Արժ. Տ. Վազգէն Բիւյ. Աթմաճեան:

Հաւաքական աղօթքէ ետք, Տիար Յակոբ Չաղացպանեան, Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Մարմնի անունով բարի գալուստի իր խօսքին մէջ անդրադարձաւ Կիրակնօրեայ Դպրոցներու ճամբով հայ մանուկներու կրօնաբարոյական եւ հայեցի դաստիարակութեան նուիրուած մշակներու նուիրական դերին եւ առաքելութեան:

Զրիստոնէական Դաստիարակութեան Գրասենեակի Վարիչներէն Գերայ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան ներկայացուց Հայ Եկեղեցւոյ տօնախմբած եւ Զրիստոսի Ս. Խաչին նուիրուած Խաչվերացի, Գիւտ խաչի, Երեւման Խաչի եւ Վարազայ Խաչի տօները, անդրադառնալով անոնց պատմական, աստուածաբանական եւ այժմեական իմաստներուն եւ արժէքներուն:

Ժողովը ծանօթացաւ Կիրակնօրեայ Դպրոցներու 2007-08 ուսումնական տարեշրջանի աշխատանքային ամփոփ ծրագիրներու:

Կիրակնօրեայ Դպրոցներու յատուկ տարեկան Ուղեցոյց Ծրագրի բաժնին մէջ արձանագրած նորութիւններէն յատկանշական է Ազգ. Առաջնորդարանի Կայքէջի Զրիստոնէական Դաստիարակութեան Կիրակնօրեայ Դպրոցներու բաժանմունքի վերաբերեալ տօներու, տաղաւարներու եւ այլ առիթներով երգուած շարականներու եւ երգերու եկեղեցւոյ Տօնակարգին հետեւողութեամբ ձայնաւոր արձանագրութիւնը:

Հաւաքին եզրափակիչ խօսքը կատարեց Առաջնորդ Սրբազանը: Ան գնահատեց նման օգտակար հաւաքներ, որոնք առիթ կը ստեղծեն փոխադարձ փորձառութիւն ձեռք բերելու եւ կը նպատակադրեն խորացնելու մեր եկեղեցագիտական գիտելիքներն ու ծանօթութիւնները:

Կիրակնօրեայ Դպրոցներու մաղթանք քայլերգով եւ Սրբազան Զօր «Պահպանիչ» աղօթքով ու խմբային նկարով վերջ գտաւ միօրեայ հաւաքը:

Ս. ՊԱՏԱՐԱԳ

Սոյն լսարան-հաւաքը զուգահիւյսով Ազգ. Առաջնորդարանի Ս. Տրդատ եւ Ս. Աշիւէն մատուռէն ներս ամսական դրութեամբ տեղի ունեցող հերթական պատարագներուն՝ երեկոյեան ժամը 6:30-ին, Ս. եւ անմահ պատարագ մատուցուեցաւ: Պատարագիչն էր Օրէնճ Քաունթիի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ Զոգեւոր Զովիւ՝ Արժ. Տ. Զրանդ Քիւյ. Երեցեան:

Յաւարտ Ս. եւ անմահ պատարագին, գլխաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր, հոգեւորականաց, դպրաց եւ սարկաւազաց խումբը թափօր կազմած եւ հաչվերաց տօնին նուիրուած շարականի երգեցողութեամբ մուտք գործեցին «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահ, ուր Առաջնորդ Սրբազանը, օրուան Աւետարանի ընթերցումէն ետք հոգեւոր իր պատգամով անդրադարձաւ Վերացման Ս. հաչի տօնի իմաստին ու խաչէն ճառագայթող փրկագործութեան խորհուրդին, բարութեան, ճշմարտութեան եւ լոյսի ծառայութեան:

«Կիլիկիա» երգով ու «Մեր Զայրենիք» քայլերգով, երեկոյեան ժամը 7:30-ին, վերջ գտաւ Կիրակնօրեայ Դպրոցներու վերամուտի առթիւ կազմակերպուած ուսուցչական կազմերու հաւաքն ու եկեղեցական հոգեպարար արարողութիւնը:

SUNDAY SCHOOL SEMINAR FOR DIRECTORS AND TEACHERS

On the afternoon of Saturday, September 15, a semi-annual seminar took place at the Prelacy “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall for Sunday School directors and teachers, in preparation for the recommencement of classes which began the following day. The seminar was held under the auspices of H.E. the Prelate, and was organized by the Prelacy Christian Education Department. The Prelate was in attendance along with Very Rev. Fr. Muron Aznikian, Rev. Hrant Yeretjian, Pastor of Forty Martyrs Church, Rev. Khoren Babochian, Pastor of St. Sarkis Church, and Rev. Vazken Atmajian, Pastor of St. Mary’s Church.

The seminar began with the Lord’s Prayer, followed by welcoming remarks by Mr. Hagop Tchagasspanian on behalf of the Sunday School Directorate. The first lecture was delivered by Very Rev. Fr. Muron Aznikian who presented history and significance of the Feasts dedicated to the Holy Cross. The Sunday School directors reported on the activities they have planned for the 2007-2008 school year.

To further assist students in their education, the Western Prelacy website was recently updated to include audio of hymns and songs for special occasions and feast days of the Armenian Church.

The curriculum and other activities for the new school year were also discussed and suggestions were presented which the Directorate will analyze prior to implementation. Closing remarks were made by the Prelate who commended the organizing such a seminar which offers the chance for the exchange of ideas and experiences. The Prelate added that we must all serve towards the spiritual nourishment of our youth and pass on to them our religious and national traditions. The seminar concluded with the Prelate's benediction.

DIVINE LITURGY

Following the Sunday School seminar, Divine Liturgy was celebrated at the Prelacy St. Dertad and St. Ashkhen chapel at 6:30 p.m. The celebrant was Rev. Hrant Yeretzian, Pastor of Forty Martyrs Church.



Following services, the Prelate, Clergy members, deacons, and choir headed in a procession to the "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall where the Prelate delivered his spiritual message on the meaning of the Exaltation of the Holy Cross and the symbolism of the Holy Cross.

The evening concluded at 7:30 p.m. with the singing of "Giligia" and the national anthem of Armenia.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ԼԻՔԱՆԱՆԻ ՀԻՄՊԱՏՈՍԻ ՏԵՂԱԿԱԼԸ**

Լոս Անճելըսի մեջ Լիբանանի հիւպատոսի տեղակալ Ֆատի Հաճալի Երեքշաբթի, 18 Սեպտեմբերին այցելութիւն մը տուաւ Ազգային Առաջնորդարան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան հօր կողմէ:



Հանդիպումին ներկայ եղան Կրօնական Ժողովի ատենապետ Գերպ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան, Ազգ. Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան եւ փոխ ատենապետ Տոքթ. Յակոբ Տէր Մկրտիչեան:

Առաջնորդ Սրբազանն ու ներկայ ներկայացուցիչները ողջունեցին նշանակեալ

դիւանագետը եւ բարի երթ մաղթեցին Լոս Անճելըսի մէջ անոր աշխատանքներուն:

Առաջնորդ Սրբազանը յիշատակեց այն սերտ կապերն ու գործակցութիւնը, որ աւանդութիւն ստեղծած է Ազգ. Առաջնորդարանի ու Լոս Անճելըսի մէջ նախապէս պաշտօնավարող գլխաւոր հիւպատոսներու հետ, ու մաղթելով, որ ան նշանակուի գլխաւոր հիւպատոս՝ վստահութիւն արտայայտեց, որ նոյն կապերն ու գործակցութիւնը կը շարունակուին անոր պաշտօնավարութեան ընթացքին:

Ֆատի Յաճախի շնորհակալութիւն յայտնեց սիրալիկ հիւրընկալութեան ու մաղթանքներուն համար:

Հանդիպումը առիթ եղաւ խորհրդակցելու Լիբանանի կացութեան ու իրադարձութեանց ընթացքին մասին:

Հիւր դիւանագետը ծանօթութիւններ քաղեց մեր Թեմին, Ազգային Առաջնորդարանին ու անոր հովանիին տակ տարուող հոգեւոր, կրթական եւ ժողովրդանուէր այլ ծառայութիւններու մասին, միաժամանակ ծանօթանալով Ազգային Առաջնորդարանի նոր շէնքի բաժանմունքներուն:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը լիբանանցի դիւանագետին յանձնեց յուշանուէրներ:

PRELATE MEETS WITH ACTING CONSUL GENERAL OF LEBANON

On the morning of Tuesday, September 18, the Acting Consul General of Lebanon the Honorable Fadi Hajali visited the Prelacy where he was greeted by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, as well as Religious Council Chair Very Rev. Fr. Muron Aznikian, Dr. Garo Agopian, and Dr. Hagop Der Megerdichian, Executive Council Chair and Vice-Chair respectively.

The Prelate and council members welcomed the Acting Consul General and wished him success as he embarks on his new duties. The Prelate expressed his appreciation for the strong partnership that has existed between the Prelacy and the Lebanese Consulate General for many years as well as with the previous Consul General, and affirmed that the close relationship will continue during Mr. Hajali's tenure. The Acting Consul General thanked the Prelate for his warm hospitality and kind remarks.

The meeting also offered the opportunity to discuss the current situation in Lebanon and for the Acting Consul General to become closely familiarized with the endeavors of the Prelacy. The meeting concluded with the Prelate presenting a memento to the Acting Consul General.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆՆ ՈՒ ԱԶԳ. ՎԱՐԶՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՅ ԺՈՂՈՎԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազանն ու Ազգային Վարչութեան անդամները Երեքշաբթի, Սեպտեմբեր 18-ին, երեկոյեան հանդիպում-ժողով մը գումարեցին Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգաբարձութեան հետ:

Ժողովը առիթ մը եղաւ անլի մօտէն ծանօթանալու եւ քննարկելու եկեղեցւոյ հովանիի տակ տարուող ամենօրեայ աշխատանքները, ինչպէս նաեւ լայնօրէն ուսումնասիրուեցաւ Կիրակնօրեայ վարժարանի եւ Ս. Գրային սերտողութեանց գործունեութիւնն ու եկեղեցւոյ պայծառութեան ի նպաստ տարուող բոլոր աշխատանքները, նաեւ շինարարական աշխատանքները:

Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. Վարչութիւնը նախ գնահատեցին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Խորէն Զինյ. Պապոշեանի աշխատանքը, ինչպէս նաեւ եկեղեցւոյ հոգաբարձութեան, երեսփոխաններուն, Տիկնանց Միութեան, Կիրակնօրեայ վարժարանի, երիտասարդացի գործունեութիւնները եւ յաջողութիւն մաղթեց բոլորին:

Ծանօթ է որ 2005 թուականին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Յայրապետի ձեռամբ կատարուեցաւ եկեղեցւոյ օծումը: Փասստինայի հայ համայնքը այդ հանգրուանէն ասդին ակներեւ բարելաւում արձանագրած է իր հոգեւոր աշխատանքներուն մէջ:

PRELATE AND EXECUTIVE COUNCIL MEET WITH BOARD OF TRUSTEES OF ST. SARKIS CHURCH

On the evening of Tuesday, September 18, the Prelate and Executive Council met with the Board of Trustees of St. Sarkis Church in Pasadena to discuss the daily endeavors of the church as well as Sunday School and Bible study related issues.

The Prelate and council members commended the pastor Rev. Khoren Babochian for his diligent work, and conveyed their best wishes to the Board of Trustees, Delegates, Ladies Auxiliary, Sunday School, and youth group, wishing them all success in their respective duties.

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱՐՏԱՅԱՅՏՈՂ ԵՐԵԿՈՅԹ

Չորեքշաբթի, 19 Սեպտեմբերի երեկոյեան, Ազգային Առաջնորդարանի Նորակառոյց շէնքի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահը ժամադրավայրը եղաւ Առաջնորդարանի մեծ ընտանիքի անդամներու, որոնք ընդառաջելով Ազգ. Վարչութեան հրաւերին՝ ընթրիքի սեղանի շուրջ հաճելի ու միաժամանակ օգտակար պահ մը բոլորեցին գլխաւորութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Սարտիրոսեանի:

Երեկոյթին հիւրընկալումը յանձն առած էին Ազգ. Վարչութեան անդամներէն՝ Ազգ. Առաջնորդարանի Շէնքի Յանձնախումբի վաստակաշատ ատենապետ Տիգրան Վահան Պղտիկեան ու իր Տիկինը՝ Նորան: Յրաւիրուած էին մեր եկեղեցիներու



Յո՞վիւները, Ազգային Երեսփոխանական Ժողովի անդամները, ծխական շրջաններու հոգաբարձական կազմերը, Ազգային Վարժարաններու Խնամակալ Մարմինի անդամները, Տնօրէններն ու Վարիչները, ինչպէս նաեւ Ազգ. Առաջնորդարանի կարգ մը յանձնախումբերու անդամները:

Հանդիպումին պաշտօնական բացումը տեղի ունեցաւ ժամը 8:15ին, աղօթքով: Ողջոյնի եւ սրտի խօսքեր արտասանեցին, առաջին հերթին, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան եւ Ազգ. վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան: Անոնք նշեցին, որ այս երեկոյթը պաշտօնական ժողովի մը կամ հաւաքի մը բնոյթը չունի, այլ կը նպատակադրէ ի մի բերել Ազգ. Առաջնորդարանի հովանիին տակ գործողները: Անոնք նաեւ շնորհաւորանքի ու բարեմաղթութեան խօսք ուղղեցին Առաջնորդ Սրբազանին, նկատի ունենալով որ անոր կուսակրօն քահանայ ձեռնադրութենէն ասդին անցած են աւելի քան 30 տարիներ, իսկ ան եպիսկոպոսական ձեռնադրութեան արժանացած էր տասը տարի առաջ:

Խօսք առաւ Առաջնորդ Սրբազանը ու բարեմաղթութեանց համար շնորհակալութիւն յայտնելէ ետք, շեշտեց, որ այս երեկոն պերճախօս ու գործնական արտայայտութիւնն է այն հասկացողութեան, որ Ազգ. Առաջնորդարանը, ծխական շրջաններն ու մեր վարժարանները կը կազմեն մէկ մեծ ընտանիք, ու մեր հաւաքական կեանքի յառաջդիմութիւնը ուղղակի արդիւնքն է ամբողջութիւնը կազմող միաւորներուն միջեւ գործակցութեան ու հաւաքական աշխատանքի: Ան յիշեցուց, որ յառաջիկայ տարին՝ 2008 թուականը 50րդ տարեդարձն է Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռին կողմէ Ամերիկայի մէջ ծառայութեան սկզբնաւորման, որ միաժամանակ կը նշէ մեր Թեմի 35րդ տարեդարձը: Վերջապէս, Առաջնորդ Սրբազան շնորհակալութեան ու գնահատանքի խօսք ուղղեց Պգտիկեան ամուլին, որ սիրայօժար կերպով հիւրընկալեց այս երեկոյթը:

Ընթրիքի պահուն, ցուցադրուեցաւ Ազգ. Առաջնորդարանի շէնքի իրականացման գլխաւոր հանգրուանները ներկայացնող ժապաւէն մը: Ապա, յաջորդաբար սրտի խօսքեր արտասանեցին Գերպ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան, Ազգ. Վարչութեան անդամներէն Տեարք Կարօ Աւագեան եւ Վահան Պգտիկեան, Ազգ. Վ. եւ Ա. Շամլեան վարժարանի տնօրէն Տիար Վազգէն Մատենլեան, Ս. Խաչ Մայր Տաճարի Հոգաբարձութեան ատենապետ Տոքթ. Յակոբ Տիգրանեան եւ Րաֆֆի Սրկ. Կարապետեան, որոնք անդրադարձան Առաջնորդ Սրբազանի ծառայական կեանքին, իրագործումներուն ու բարեմաղթութիւններ փոխանցեցին:

Երեկոյթին եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազանը, որ անգամ մը եւս գնահատեց ներկաներուն աշխատանքները, անդրադարձաւ նման հաւաքներու օգտակարութեան ու աղօթքէ ետք, ներկաները հրաւիրեց միասնաբար երգելու «Կիլիկիա»ն ու «Մեր Հայրենիք»ը:

RECEPTION FOR MEMBERS OF THE PRELACY FAMILY

On the evening of Wednesday, September 19, members of the Western Prelacy family gathered at the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall for an intimate dinner headed by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate,

and by the invitation of the Executive Council. The reception was hosted by Executive Council member and Building Committee Chairman Mr. Vahan Bezdikian and his wife Nora.

Among the invited guests were Prelacy Pastors, Delegates of the Representatives Assembly, Boards of Trustees, Board of Regents members, Principals/Directors of Prelacy schools and pre-schools, and members of various Prelacy committees.

The evening began with prayer, followed by welcoming remarks by Central Executive Council member Mr. Khajag Dikijian and Executive Council Chair Dr. Garo Agopian, both of whom reiterated that the evening was not a formal meeting rather it was an opportunity for members of the larger Prelacy family to come together in a family atmosphere to get to know each other more closely. Both speakers congratulated and conveyed their best wishes to the Prelate for his over 30 years of pastoral service and 10th year of his ordination as bishop.

The Prelate thanked the speakers for their kind remarks and pointed out that the gathering was a beautiful expression of the close familial relationship that exists between the Prelacy, parishes, and schools, emphasizing that our collective successes are directly related to the collaboration between colleagues. The Prelate also reminded the guests that in 2008 we will mark the 50th anniversary of the establishment of a Prelacy in North America under the jurisdiction of the Holy See of Cilicia and the 35th anniversary of the Western Prelacy. The Prelate concluded his remarks by thanking Mr. and Mrs. Vahan Bezdikian for hosting the dinner.

During dinner, a video documenting the history of the new Prelacy building was screened and those wishing to offer their remarks were encouraged to do so and included Very Rev. Fr. Muron Aznikian, Executive Council members Mr. Garo Avakian and Mr. Vahan Bezdikian, Chamlian school principal Mr. Vazken Madenlian, Holy Cross Board of Trustees Chair Dr. Hagop Dikranian, and Deacon Raffi Garabedian.

Concluding remarks were made by the Prelate who commended the efforts of the guests and noted the value of such gatherings, then invited the guest to participate in the joint singing of “Giligia” and the national anthem of Armenia.

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ-ԵՐԵՒԱՆ ՔՈՅՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ՆՇԱՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Լոս Անճելլոսի քաղաքապետական խորհրուղի նախագահ Էրիք Կարստեթիի նախաձեռնությամբ, Ուրբաթ, Սեպտեմբեր 21-ի առաւօտեան ժամը 9:30-ին, յատուկ արարողութեան մը ընթացքին, Լոս Անճելլոսի քաղաքապետարանին մէջ տեղի ունեցաւ Լոս Անճելլոս եւ Երեւան քոյր քաղաքներու պաշտօնական նշանակին հրապարակման արարողութիւնը:



Ապա, քաղաքապետարանի գրասենեակին մեջ տեղի ունեցավ յատուկ հանդիպում մը, որուն ներկայ եղաւ ըլլայ Առաջնորդ Սրբազան Զայրը եւ փոխանցեց իր օրհնութիւններն ու յաջողութեան եւ համագործակցութեան մաղթանքը:

Յրաւիրեալներու շարքին էին Լոս Անճելըսի մօտ Զայաստանի

հիւպատոսի տեղակալ տիար Յարութիւն Գոծոյեան, Լոս Անճելըս Երեւան քոյր քաղաքներու յանձնախումբի անդամներ եւ այլ ներկայացուցչական անձնաւորութիւններ:

Ուշագրաւ էր, որ տոյն օրը հայ ժողովուրդը տօնեց Զայաստանի վերանկախացման 16-րդ տարեդարձը:

PRELATE PARTICIPATES IN UNVEILING OF LOS ANGELES-YEREVAN SISTER CITY SIGN

On the morning of Friday, September 21st, the unveiling of the official ceremony of unveiling the Los Angeles-Yerevan Sister City sign took place on the lawn of City Hall, presided over by City Council President Eric Garcetti.

The unveiling was followed by recognition in the City Council Chambers where the Prelate delivered the invocation and remarks, after which a reception took place where the Prelate offered the closing prayer.

Deputy Consul General of Armenia Mr. Harutyun Kojoyan, President of the Sister Cities of Los Angeles Tom LaBonge, and members of the Los Angeles-Yerevan Sister City Association were in attendance along with various officials.



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ Կ'ԸԼԼԱՅ ԶԱԼԵՊԻ ԱՉԳ. ՍԱՅԱԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ 80-ԱՄԵԱԿԻ ՁԵՌՆԱՐԿԻՆ

Ուրբաթ, 21 Սեպտեմբերի երեկոյեան, ժամը 7:30-էն սկսեալ Փասատինայի Յայ Կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Յալէպի Ազգային Սահակեան վարժարանի 80-ամեակին նուիրուած ընդունելութիւն մը: Ձեռնարկը կը վայելէր Առաջնորդ Սրբազան Զոր հովանաւորութիւնն ու ներկայութիւնը եւ կազմակերպուած էր Յալէպի վարժարանի Շրջանաւարտից Միութեան կողմէ:

Ներկայ պիտ էր նաեւ Սահակեանի նախկին տնօրէն եւ ուսուցիչ Արեւելեան Թեմի Առաջնորդ՝ Բարձր. Տ. Օշական Ս. Արք. Զոլոյեան: Իրագործուեցաւ կոկիկ յայտագիր մը:

PRELATE ATTENDS 80TH ANNIVERSARY CELEBRATION OF SAHAGIAN SCHOOL

On the evening of Friday, September 21st, Sahagian School of Aleppo celebrated its 80th anniversary at the Pasadena Armenian Center. The event, which was organized by the Sahagian School Alumni Association, was held under the auspices of and with the participation of the Prelate.

Former principal and teacher H.E. Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern United States, was also in attendance.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՖՐԵՉՆՈՅԻ ՄԷՋ ՓՐՓՈՒՐԻ ԱՄԱՆԴԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ

Այս շաբաթավերջին, Ֆրեզնոյի մէջ տեղի կ'ունենայ համահայկական շքեղ եւ տոհմիկ փառատօն՝ փրփուրի աւանդական եւ իւրայատուկ արարողութիւնը, նախաձեռնութեամբ Ֆրեզնոյի Յայ Կեդրոնին եւ Յայ Օգնութեան Միութեան: Փառատօնը սկսաւ Ուրբաթ օր եւ կը շարունակուի մինչեւ Կիրակի երեկոյ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զոր, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Աշոտ Զինյ. Գամպուրեան Շաբաթ, Սեպտեմբեր 22-ի երեկոյեան ներկայ պիտի ըլլայ սոյն փառատօնին եւ պիտի կատարէ Անդաստանի արարողութիւնը :

PRELATE REPRESENTED AT THE ANNUAL GRAND ARMENIAN FESTIVAL IN FRESNO

The annual *Prpoor* festival organized by the Fresno Armenian community will take place this weekend. The festival began on the evening of Friday, September 21st, and will continue through Sunday, September 23rd.

Rev. Ashod Kambourian, Pastor of Holy Cross Cathedral in Montebello, will represent the Prelate at the festival where he will also officiate over the traditional *Antasdan* ceremony on Saturday evening.